ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան

04.02.2026թ.
ժամը 12:00

Գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցում էին

Մ. Քիրամիջյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի պետի պարտականությունները կատարող
Մ.Գասպարյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի դոնորների հետ համագործակցության բաժնի պետի պաշտոնակատար
Ա.Բարսեղյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ դոնորների հետ համագործակցության բաժն առաջին կարգի մասնագետի ժ/պ
Լ.Սարգսյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար
Լ.Հակոբյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետ

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2026 թվականի հունվարի 15-ին ժամը 12:00 www.armeps.am համակարգի միջոցով:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

2026թ-ի հունվարի 15-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով («Հայաստանի պատրաստվածության հրատապ կարիքների հասցեագրում՝ ԿԿՀ-ի համալրման 2-րդ շրջափուլում կլիմայական հետևողական գործողությունների իրականացման համար» պատրաստվածության աջակցության ծրագրի շրջանակներում Կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարական պլանավորման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, և հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 5 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017

թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ.Քիրամիջյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին
2. Նախարակավորման ցուցակում ներառելու մասին

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Մ.Քիրամիջյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված, տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկան

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են սահմանված օրը և ժամին՝ 2026 թվականի հունվարի 15-ին ժամը 12:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ պարզաբանում տեղի չի ունեցել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/146 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը այսուհետ՝ նաև մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	էլ. հասցեներ	Հեռախոսահամար
1	Քոնսեկոարդ ՍՊԸ և Ալֆա Փարթներս ՍՊԸ կոնսորցիում	info@consecoard.am mikaeltevosyan@gmail.com	099406180

Քոնսեկոարդ ՍՊԸ-ը Հավելված 1 և Հավելված 2 ներկայացրել է ոչ էլեկտրոնային ստորագրված, ինչը շտկման ենթակա է, կամ անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները:

Հրավերին պահանջով մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար

1) «Մասնագիտական փորձառություն»

2) «Աշխատանքային ռեսուրսներ»

1) «Մասնագիտական փորձառություն»

ա. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը ըստ որորտների՝

Փորձառությանը ներկայացվող պայմանները	Փորձառությունն ապացուցող փաստաթղթեր
Կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում ռազմավարական փաստաթղթերի մշակման փորձ:	Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված առնվազն 50 հազար ԱՄՆ դոլարին համարժեք արժողությամբ կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում ռազմավարական փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման առնվազն 1 պայմանագիր:
Մշտադիտարկման, գնահատման և ուսուցման համակարգերի համատեքստում գործիքների մշակման փորձ:	Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի մշտադիտարկման, գնահատման և ուսուցման համակարգերի համատեքստում գործիքների մշակման առնվազն 20 հազար ԱՄՆ դոլարին համարժեք արժողությամբ ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագիր:

Որպես մասնագիտական փորձառություն ներկայացրած պայմանագրերը պետք է ունենան կատարումն ապացուցող փաստաթղթեր, որոնք առկա չեն Քոնսեկոարդ ՍՊԸ-ի փաթեթում: Այդ հանգամանքը շտկման ենթակա է:

Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտ էր ներկայացնել համապատասխան հրավերի պահանջներին: Սակայն Քոնսեկոարդ ՍՊԸ-ը տվյալ տեղեկատվությունը ներկայացրել էր միայն անգլերեն լեզվով, ինչը շտկման ենթակա է:

Նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով: Մասնակցին ծանուցվեց հայտը շտկման անհրաժեշտության մասին: Մեկ օրվա ընթացքում Քոնսեկոարդ ՍՊԸ ներկայացրեց պայմանագրերի պատճենները, պայմանագրերի կատարման մասին փաստաթղթերը և աշխատակազմի մասնագետների ինքնակենսագրականները և մնացած անհրաժեշտ փաստաթղթերը:

Ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ առկա են Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: Քոնսեկոարդ ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին և այն կներառվի նախաորակավորված մասնակիցների ցուցակում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա.Հակոբյանը ներկայացրեց երկրորդ փուլի հրավերի նախագիծը:

Հաստատել 2-րդ փուլի Հրավերի տեքստը:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Քիրամիջյան _____

Հանձնաժողովի անդամներ՝
Մ.Գասպարյան _____

Լ.Սարգսյան _____

Ա.Բարսեղյան _____

Լ.Հակոբյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան _____